

ՔԿՎ ՊԱԲ ՀԲ

Գործառույթային պարտականություններ

Չարդ 1.(04.3356) „Մակարով,, տեսակի ատրճանակի փողի երկարությունը

1. 97 մմ
2. 87 մմ
3. 93 մմ

(3)

Չարդ 2.(04.3357) „Մակարով,, տեսակի ատրճանակի գնդակը քանի մետրից է կորցնում մահացու ուժը

1. մինչև 400մետր
2. մինչև 350 մետր
3. մինչև 370 մետր

(2)

Չարդ 3.(04.3358) „Մակարով,, տեսակի ատրճանակի փողի անցքում ակոսների քանակը

1. 4 ակոս
2. 5 ակոս
3. 6 ակոս

(1)

Չարդ 4.(04.3359) Քրեակատարողական հիմնարկում ակնհայտ հղիության նշաններ ունեցող կնոջ նկատմամբ

1. թույլատրվում է զենք օգտագործել, եթե նա դիմում է փախուստի քրեակատարողական հիմնարկից
2. թույլատրվում է զենք օգտագործել, եթե նրա կողմից ցույց է տրվում զինված դիմադրություն կքրեակատարողական ծառայողի կյանքին կամ առողջությանը սպառնացող գործողություններ կատարելու դեպքում
3. չի թույլատրվում զենք օգտագործել

(2)

Չարդ 5.(04.3360) Քրեակատարողական հիմնարկներում մարտական կամ ծառայողական զենք գործադրվում է

1. քրեակատարողական ծառայողների, քրեակատարողական հիմնարկում գտնվող անձանց կյանքին կամ առողջությանը սպառնացող հարձակումները հետ մղելիս, ինչպես նաև զենքին տիրելու փորձերը խափանելիս
2. դատապարտյալի կամ կալանավորված անձի կողմից անձնական խուզարկությանը խոչընդոտելու դեպքում
3. քրեակատարողական հիմնարկում դատապարտյալի կողմից քրեակատարողական ծառայողի օրինական պահանջը չկատարելու, զազրախոսելու և նրան սպառնալու դեպքում

(1)

Չափ 6.(04.3361) Քրեակատարողական հիմնարկներում մարտական կամ ծառայողական զենք գործադրվում է

1. քրեակատարողական հիմնարկների շենքերի, շինությունների, տրանսպորտային միջոցների վրա խմբակային կամ զինված հարձակումը հետ մղելիս

2. քրեակատարողական ծառայողի՝ օրինական պահանջները չկատարելու կամ պարտականությունների կատարմանը խոչընդոտելու յուրաքանչյուր դեպքում

3. քրեակատարողական ծառայողի անձնական անվտանգության ապահովման համար

(1)

Չափ 7.(04.3362) Քրեակատարողական հիմնարկներում ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ և զենք գործադրելիս քրեակատարողական ծառայողը պարտավոր է

1. իր մտադրության մասին նախազգուշացնել իր անմիջական ղեկավարին

2. դրանք գործադրել իրավախախտման կամ դիմադրության վտանգավորության բնույթին և աստիճանին համաչափ

3. մեկուսացնել մարմնական վնասվածքներ ստացած անձանց

(2)

Չափ 8.(04.3363) Անձնական անվտանգության ապահովման համար քրեակատարողական ծառայողն իրավունք ունի օգտագործել

1. քաղաքացիական զենք

2. մարտական զենք

3. անհատական պաշտպանության միջոցներ

(3)

Չափ 9.(04.3364) Քրեակատարողական հիմնարկներում որպես հատուկ միջոցներ չեն կարող կիրառվել

1. կայծային պարպիչները

2. ռետինե մահակները

3. արգելքներ քանդող միջոցները

(1)

Չափ 10.(04.3365) Քրեակատարողական ծառայողի կողմից ծառայողական պարտականությունների կատարման կապակցությամբ քրեակատարողական ծառայությանն անհրաժեշտ զենքի, հատուկ և ինքնապաշտպանական միջոցների տեսակը, ձևը, մոդելը և քանակը սահմանում է

1. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը

2. Հայաստանի Հանրապետության կառավարությունը

3. Հայաստանի Հանրապետության ազգային ժողովը

(2)

Չափ 11.(04.3366) Քրեակատարողական վարչության պետին և դատախազին քսանչորս ժամվա ընթացքում գրավոր հաղորդում է ուղարկվում

1. Ֆիզիկական ուժի կամ հատուկ միջոցի գործադրմամբ առողջությանը վնաս պատճառելու կամ մահ պատճառելու դեպքերի մասին

2. Ֆիզիկական ուժի գործադրման բոլոր դեպքերի մասին

3. հատուկ միջոցի գործադրման բոլոր դեպքերի մասին

(1)

Չարդ 12.(04.3339) Քրեակատարողական վարչության անվանմամբ հայերեն լեզվով համարակալված կլոր մետաղյա դրոշմակնիքներ ունեն հերթապահության բաժնի

1. պետը, առաջատար և կրտսեր մասնագետները

2. պետը և առաջատար մասնագետները

3. միայն բաժնի պետը

(2)

Չարդ 13.(04.3340) Քրեակատարողական վարչության հերթապահության բաժնի հիմնական խնդիրներից է

1. կազմակերպել տազնապի կամ ուսումնական տազնապի հայտարարման դեպքում համապատասխան անձնակազմի հավաքագրման աշխատանքները

2. կազմակերպել քրեակատարողական հիմնարկների քաղաքացիական և մոբիլիզացիոն աշխատանքների իրականացումը

3. կազմակերպել կալանավորված անձանց և դատապարտյալների կողմից ներքին կանոնակարգի պահպանումը օրենսդրությամբ սահմանված կարգով

(1)

Չարդ 14.(04.3341) Քրեակատարողական վարչության հերթապահության բաժնի հիմնական խնդիրներից է

1. քրեակատարողական հիմնարկներում ապահովել կալանավորված անձանց և ազատությունից զրկելու հետ կապված պատժի դատապարտված անձանց պահպանությունը և հսկողությունը

2. արագ արձագանքման աշխատանքների իրականացումը քրեակատարողական հիմնարկներում արտակարգ իրավիճակներ առաջանալիս ներքին կանոնակարգի խախտումները վերացնելու նպատակով

3. սահմանված կարգով ապահովել հերթապահության իրականացումը քրեակատարողական վարչությունում

(3)

Չարդ 15.(04.3342) Քրեակատարողական վարչության հերթապահության բաժնի հիմնական խնդիրներից է

1. իրականացնել հսկողություն քրեակատարողական ծառայողների կողմից համազգեստի կրման կարգի և պայմանների պահպանման նկատմամբ՝ քրեակատարողական վարչության վարչական շենք մուտք և ելք գործելիս

2. կազմակերպել քրեակատարողական հիմնարկների անվտանգության ապահովումը

3. ապահովել քրեակատարողական ծառայողների կողմից ներքին կանոնակարգի պահպանումը

(1)

Ֆարց 16.(04.3343) Քրեակատարողական վարչության հերթապահության բաժնի հիմնական խնդիրներից է

1. կազմակերպել քրեակատարողական հիմնարկների պահպանության ապահովումն օրենսդրությամբ կարգով
2. իրականացնել հսկողություն քրեակատարողական վարչության վարչական շենք քաղաքացիների և այլ անձանց մուտքի և ելքի սահմանված կարգի պահպանման նկատմամբ
3. քրեակատարողական հիմնարկներում ապահովել կալանավորված անձանց և ազատությունից զրկելու հետ կապված պատժի դատապարտված անձանց պահպանությունը և հսկողությունը

(2)

Ֆարց 17.(04.3344) Քրեակատարողական վարչության հերթապահության բաժնի առաջատար մասնագետը

1. միջոցներ է ձեռնարկում կալանավորված անձանց և դատապարտյալների կողմից ներքին կանոնակարգի պահանջների խախտումները, անհնազանդության և փախուստի դեպքերը կամ այլ իրավախախտումները բացահայտելու կամ կանխելու համար
2. կատարում է աշխատանքի բաշխում և վերաբաշխում բաժնի աշխատողների միջև
3. վարում է զինամթերքի, գույքի և դրա սարքին լինելու վերաբերյալ մատյանները

(3)

Ֆարց 18.(04.3345) Քրեակատարողական վարչության հերթապահության բաժնի առաջատար մասնագետը քրեակատարողական ծառայողներին է հանձնում նրանց ամրակցված զենքը, զինամթերքը և հատուկ միջոցները

1. ստացողի կամ հանձնողի գրավոր պահանջագրով
2. փոխարինող քարտերով կամ համապատասխան ընդունման-հանձնման մատյանով, ստացողի կամ հանձնողի պարտադիր ստորագրությամբ և վկայականի համարի նշումով
3. ստացողի կամ հանձնողի վկայականի համարը նշելով

(2)

Ֆարց 19.(04.3346) Քրեակատարողական վարչության հերթապահության բաժնի առաջատար մասնագետը զենքի, զինամթերքի կամ հատուկ միջոցների կորստյան, հանձնումը ձգձգելու փաստերի, ինչպես նաև անսարքությունների կամ դրանց պակասորդի հայտնաբերման դեպքերում

1. գրավոր զեկուցում է քրեակատարողական վարչության հերթապահության բաժնի պետին
2. միջոցներ է ձեռնարկում կորած զենքը, զինամթերքը կամ հատուկ միջոցները հայտնաբերելու, անսարքությունները վերացնելու կամ պակասորդը լրացնելու ուղղությամբ
3. քրեակատարողական ծառայողին տրամադրում է բավարար ժամանակ կորած զենքը, զինամթերքը կամ հատուկ միջոցները հայտնաբերելու, անսարքությունները վերացնելու կամ պակասորդը լրացնելու համար

(1)

Ֆարց 20.(04.3347) Քրեակատարողական վարչությունում զինամթերքը և հատուկ միջոցները պահվում են

1. ուստիկանության տարածքային մարմնում

2. քրեակատարողական վարչության հերթապահության բաժնում՝ դրա համար նախատեսված երկաթյա պահարաններում

3. քրեակատարողական ծառայողներին ամրակցված երկաթյա պահարաններում

(2)

Չարդ 21.(04.3348) Քրեակատարողական վարչությունում զինամթերքի և հատուկ միջոցների պահման սենյակում

1. կազմակերպվում է տեսաձայնագրում

2. կազմակերպվում է հերթափոխային հերթապահություն

3. կազմակերպվում է համապատասխան ահազանգման համակարգ

(3)

Չարդ 22.(04.3349) Քրեակատարողական վարչությունում զինամթերքի և հատուկ միջոցների պահման սենյակը և պահարանները

1. դրոշմակնքվում են հերթապահության բաժնի կրտսեր մասնագետի կողմից

2. դրոշմակնքվում են հերթապահության բաժնի առաջատար մասնագետի կողմից

3. չեն դրոշմակնքվում

(2)

Չարդ 23.(04.3350) Քրեակատարողական վարչությունում զինամթերքի և հատուկ միջոցների պահման սենյակի և պահարանների բանալիները

1. գտնվում են հերթապահության բաժնի պետի մոտ

2. գտնվում են հերթապահության բաժնի կրտսեր մասնագետի մոտ

3. գտնվում են հերթապահության բաժնի առաջատար մասնագետի մոտ

(3)

Չարդ 24.(04.3351) Քրեակատարողական վարչության հերթապահ բաժնի երկրորդ կարգի մասնագետը

1. գիշերային ժամերին ստուգումներ չի կատարում

2. վարչության աշխատողներին ցուցաբերում է գործնական և մեթոդական օգնություն

3. տիրապետում է վարչության վարչական շենքի և դրան հարող վարչական տարածքի պահպանության և պաշտպանության պլաններին, ծառայողական շենքերի և շինությունների տեղագրերին

(3)

Չարդ 25.(04.3352) Քրեակատարողական վարչության հերթապահ բաժնի երկրորդ կարգի մասնագետը

1. գիշերային ժամերին փակում է վարչության վարչական շենքի և վարչական տարածքի մուտքերը

2. գիշերը ոչ պակաս, քան մեկ անգամ ստուգում է զանգերի, ազդանշանային համակարգի, կապի միջոցների սարքին լինելը, վարչական շենքի աշխատասենյակների և մուտքի, ինչպես նաև վարչական տարածքի մուտքի փակ լինելը

3. գիշերային ժամերին ստուգումներ չի կատարում

(1)

Չարդ 26.(04.3353) Քրեակատարողական վարչության հերթապահ բաժնի երկրորդ կարգի մասնագետը

1. գիշերը ոչ պակաս, քան մեկ անգամ ստուգում է զանգերի, ազդանշանային համակարգի, կապի միջոցների սարքին լինելը, վարչական շենքի աշխատասենյակների և մուտքի, ինչպես նաև վարչական տարածքի մուտքի փակ լինելը

2. գիշերը ոչ պակաս, քան երկու անգամ ստուգում է զանգերի, ազդանշանային համակարգի, կապի միջոցների սարքին լինելը, վարչական շենքի աշխատասենյակների և մուտքի, ինչպես նաև վարչական տարածքի մուտքի փակ լինելը

3. գիշերային ժամերին ստուգումներ չի կատարում

(2)

Չարդ 27.(04.3354) «Մակարով» տեսակի ատրճանակի քաշը փամփուլտներով

1. 910 գրամ

2. 810 գրամ

3. 790 գրամ

(2)

Չարդ 28.(04.3355) „Մակարով„ տեսակի ատրճանակի քաշն առանց փամփուլտների

1. 780 գրամ

2. 800 գրամ

3. 730 գրամ

(3)

ՕԲ

Գործառույթային պարտականություններ

Չարդ 1.(04.3052) Ստորել նշված որ օպերատիվ հետախուզական միջոցառումն իրավունք չունեն իրականացնել քեակատարողական ծառայության մարմինները

1. օպերատիվ հարցում

2. համեմատական հետազոտումների նմուծների հավաքում

3. կաշառք ստանալու կամ կաշառք տալու նշանակում

(3)

Չարդ 2.(04.3053) Անձի նույնացումը

1. անձանց հետեւելը կամ առանձին դեպքերի եւ իրադարձությունների ընթացքի վերահսկումն է
2. անձի ինքնությունը պարզելն է արտաքին նշանների, մատնահետքերի եւ քրեագիտական այլ հետքերի հիման վրա

3. առանձին դեպքերի եւ իրադարձությունների ընթացքի վերահսկումը, դրանց ամրագրումը՝ լուսանկարահանման, էլեկտրոնային եւ այլ կրիչների միջոցով

(2)

Ֆարց 3.(04.3054) Արտաքին դիտումը

1. բաց տարածությունում կամ հասարակական վայրում անձանց հետեւելն է կամ առանձին դեպքերի եւ իրադարձությունների ընթացքի վերահսկումը՝ առանց բնակարանի անձեռնմխելիության խախտման, հատուկ կամ այլ տեխնիկական միջոցների կիրառմամբ կամ առանց դրանց

2. բնակարանում հատուկ եւ այլ տեխնիկական միջոցների կիրառմամբ անձին հետեւելն է ու առանձին դեպքերի եւ իրադարձությունների ընթացքի վերահսկումը

3. օպերատիվ-հետախուզական նպատակներով անձի ինքնությունը պարզելն է արտաքին նշանների, մատնահետքերի եւ քրեագիտական այլ հետքերի հիման վրա

(1)

Ֆարց 4.(04.3055) Շենքերի, շինությունների, կառույցների, տեղանքի եւ տրանսպորտային միջոցների հետազոտումը

1. այդ առարկաների արտաքին զննումն է

2. այդ առարկաների հատկանիշների եւ այլ տեղեկությունների բացահայտումն է հատուկ եւ այլ տեխնիկական միջոցներով կամ առանց դրանց

3. այդ առարկաների հետազոտման արդյունքների ամրագրումն է՝ տեսանկարահանման, ձայնագրման, լուսանկարահանման, էլեկտրոնային եւ այլ կրիչների միջոցով կամ առանց դրանց

(3)

Ֆարց 5.(04.3056) Օպերատիվ հետախուզական միջոցառում է

1. հսկիչ գնումը

2. քննչական փորձարարությունը

3. նմուշների ստացումը

(1)

Ֆարց 6.(04.3057) Օպերատիվ ներդրումը

1. օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների հաստիքային զաղտնի աշխատակիցների, այդ մարմինների հետ զաղտնի հիմունքներով համագործակցող անձանց զաղտնի ներդրումն է որոշակի մարմիններում, կազմակերպություններում կամ խմբավորումներում

2. օպերատիվ- հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների օպերատիվ աշխատակիցների ներդրումն է որոշակի մարմիններում, կազմակերպություններում կամ խմբավորումներում՝ օպերատիվ-հետախուզական խնդիրներ լուծելու նպատակով

3. երկու պատասխանն էլ ճիշտ է

(1)

Ֆարց 7.(04.3058) Օպերատիվ փորձարարությունը

1. քրեական գործի քննության ընթացքում որոշակի հանգամանքների հնարավորության պարզումն է

2. որոշակի հանգամանքներում այս կամ այն իրադարձությունների կատարման հնարավորության ստուգումն է, օպերատիվ-հետախուզական գործունեության ընթացքում պարզաբանման ենթակա հանգամանքների կամ դրանց մի մասի վերարտադրման միջոցով

3. հատուկ միջոցներով անցկացվող փորձարկումներն են դրանց համար հատուկ նախատեսված վայրերում՝ նպատակ ունենալով պարզել փորձարկվող տեխնիկայի մարտավարատեխնիկական ցուցանիշները

(2)

Ֆայրց 8.(04.3059) Օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացման որոշում կայացնելու հիմք կարող է հանդիսանալ

1. սպասարկող դատավորի ցուցումը
2. սպասարկող դատախազի բանավոր ցուցումը
3. օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի օպերատիվ ղեկավարի որոշումը

(3)

Ֆայրց 9.(04.3060) Օպերատիվ-հետախուզական միջոցառում անցկացնելու մասին որոշման ժամկետի հաշվարկումը սկսվում է դրա ընդունման օրվանից եւ չի կարող ավելի լինել, քան

1. տասն օրը
2. երկու ամիսը
3. վեց ամիսը

(2)

Ֆայրց 10.(04.3061) Օպերատիվ-հետախուզական միջոցառումն արձանագրում է

1. այն անցկացնող պաշտոնատար անձը
2. այն անցկացնող պաշտոնատար անձի ղեկավարը
3. երկու պատասխաններն էլ սխալ են

(1)

Ֆայրց 11.(04.3062) Օպերատիվ-հետախուզական գործունեությամբ իրավունք չունեն զբաղվել

1. հարկային մարմինները
2. մաքսային մարմինները
3. արտակարգ իրավիճակների նախարարությունը

(3)

Ֆայրց 12.(04.3063) Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմիններից ազգային անվտանգությունը ու ոստիկանությունն իրավունք չունեն իրականացնել օպերատիվ հետախուզական միջոցառումներից

1. վերահսկելի մատակարարում և գնում
2. անձի նույնացում
3. հսկիչ գնում

(3)

Ֆայրց 13.(04.3064) Օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացման ընթացքում գործածվող հատուկ տ"խնիկական միջոցների ցանկը հաստատում է

1. Հայաստանի Հանրապետության կառավարությունը

2. Հայաստանի Հանրապետության նախագահը
3. Հայաստանի Հանրապետության ազգային ժողովը

(1)

Հարց 14.(04.3065) Յուրաքանչյուր անձ, ում նկատմամբ կայացվել է արդարացման դատավճիռ, իր նկատմամբ իրականացված օպերատիվ- հետախուզական միջոցառումների հետեւանքով ստացված նյութերը եւ փաստաթղթերը կարող է պահանջել

1. եռամսյա ժամկետում
2. վեցամսյա ժամկետում
3. մեկ տարվա ընթացքում

(1)

Հարց 15.(04.3066) «Օպերատիվ- հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված օպերատիվ- հետախուզական միջոցառումների իրականացման նկատմամբ անմիջական վերահսկողություն է իրականացնում

1. այդ միջոցառումներն անցկացնելու մասին որոշում կայացրած պաշտոնատար անձը, որն անձնական պատասխանատվություն է կրում օպերատիվ- հետախուզական գործունեության իրականացման օրինականության համար

2. այդ միջոցառումն իրականացնող մարմնի գտնվելու վայրի տարածքային դատարանը

3. հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ոստիկանության քննչական գլխավոր վարչության պետը

(1)

Հարց 16.(04.3067) Օպերատիվ-հետախուզական միջոցառումներ անցկացնող մարմինների հետ գաղտնի համատեղ համագործակցող անձի՝ օպերատիվ-հետախուզական միջոցառմանը մասնակցելու հետեւանքով զոհվելու դեպքում նրա ընտանիքին վճարվում է միանվագ նպաստ

1. զոհվածի ամսական դրամական բավարարման հինգ տարվա գումարի չափով,
2. զոհվածի ամսական դրամական բավարարման տասը տարվա գումարի չափով
3. զոհվածի ամսական դրամական բավարարման երեք տարվա գումարի չափով

(2)

Հարց 17.(04.3068) Նշվածներից որը օպերատիվ- հետախուզական միջոցառումների անցկացման որոշում կայացնելու հիմք չէ

1. դատախազի գրավոր ցուցումը
2. քննիչի, հետաքննության մարմնի եւ դատարանի որոշումները
3. կատարված, կատարվող կամ նախապատրաստվող հանցագործությունների մասին քաղաքացիների կամ իրավաբանական անձանց հաղորդումները

(3)

Հարց 18.(04.3069) Օպերատիվ- հետախուզական գործունեություն իրականացնող մարմիններն իրավունք չունեն օպերատիվ-հետախուզական գործունեության նախապատրաստմանն ու անցկացմանը որպես համագործակցող անձ ներգրավվելու

1. չափահաս եւ գործունակ անձինք

2. նախարարները
3. օտարերկրյա քաղաքացիները

(2)

Չափոց 19.(04.3070) Օպերատիվ- հետախուզական գործունեության սկզբունք չէ

1. օրինականությունը
2. հրապարակայնությունը
3. բազմակողմանիությունը

(2)

Չափոց 20.(04.3071) Օպերատիվ ստորաբաժանումների աշխատակիցներն իրենց գործունեությունն իրականացնելիս, հրաման կամ ցուցում ստանալիս՝ դրանց օրինականության վերաբերյալ իրենց կասկածների մասին պարտավոր են անհապաղ գրավոր զեկուցել

1. հսկող դատախազին
2. հրամանը կամ ցուցումը տվողին կամ նրա վերադասին կամ փոխարինողին
3. երկու պատասխաններն էլ սխալ են

(2)

Չափոց 21.(04.3266) Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմիններն իրավունք չունեն օպերատիվ-հետախուզական գործունեության նախապատրաստական ու անցկացմանը ներգրավել

1. վարակիչ հիվանդություններով տառապող անձանց
2. այն անձանց, ովքեր ՀՀ քաղաքացի չեն
3. պատգամավորներին

(3)

Չափոց 22.(04.3267) Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների պարտականությունների մեջ չի մտնում

1. Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված կարգով համագործակցել միջազգային իրավապահ կազմակերպությունների, օտարերկրյա պետությունների իրավապահ մարմինների և հատուկ ծառայությունների հետ
2. արարքին քրեաիրավական որակում տալ
3. իրենց լիազորություններն իրականացնելիս համագործակցել իրավապահ մարմինների հետ՝ նրանց փոխանցել իրենց հայտնի դարձած և այդ մարմինների իրավասությանը վերաբերվող տեղեկություններ

(2)

Չափոց 23.(04.3268) Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմիններին արգելվում է

1. անցկացնել օպերատիվ-հետախուզական միջոցառումներ ի վնաս որևէ ֆիզիկական կամ իրավաբանական անձի
2. բացահայտ կամ գաղտնի մեթոդներով իրականացնել օպերատիվ պարզաբանում

3. հատուցումով կամ անհատույց, պայմանագրով կամ առանց դրա համագործակցել օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների հետ գաղտնի համագործակցելու ցանկություն հայտնած անձանց հետ

(1)

Չարդ 24.(04.3269) Համագործակցող անձի հավաքագրումն իրականացվում է

1. պարտադրաբար
2. կանավոր սկզբունքներով
3. առանց իր գիտության
4. խաբեության միջոցով

(2)

Չարդ 25.(04.3270) Կալանավորված անձանց կամ դատապարտյալների կողմից զինված դիմադրություն ցույց տալու և քրեակատարողական ծառայողի կյանքին կամ առողջությանը սպառնացող գործողություններ կատարելու դեպքում արգելվում է քաղաքացիական զենք կամ հատուկ միջոցներ գործադրել

1. հղիության ակնհայտ նշաններ ունեցող կանանց նկատմամբ
2. ակնհայտ հաշմանդամների նկատմամբ
3. անչափահասների նկատմամբ
4. երեք դեպքերում էլ թույլատրվում է

(3)

Չարդ 26.(04.3271) Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների հետ գաղտնի հիմունքներով համագործակցող անձանց հավաքագրման, ներդրման և վճարման կարգը սահմանվում է

1. ֆինանսների նախարարությունում գործող իրավական ակտերով
2. այդ մարմնի նորմատիվ իրավական ակտերով
3. Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ

(2)

Չարդ 27.(04.3272) Հեռախոսային խոսակցությունների վերահսկում իրավունք չունեն կատարել

1. Հայաստանի Հանրապետության մաքսային մարմինները
2. Քրեակատարողական ծառայության մարմինները
3. Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը

(1)

Չարդ 28.(04.3273) Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմիններից մաքսային մարմիններն իրավունք չունեն իրականացնել օպերատիվ հետախուզական միջոցառումներից

1. ֆինանսական տվյալների մատչելիության ապահովում և ֆինանսական գործարքների գաղտնի վերահսկում
2. նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների վերահսկում
3. օպերատիվ փորձարարություն

(2)

Չարդ 29.(04.3274) Օպերատիվ- հետախուզական գործունեություն իրականացնող մարմիններից հարկային մարմինները իրավունք չունեն իրականացնել օպերատիվ հետախուզական միջոցառումներից

1. օպերատիվ ներդրում
2. արտաքին դիտում
3. ֆինանսական տվյալների մատչելիության ապահովում և ֆինանսական գործարքների գաղտնի վերահսկում

(3)

Չարդ 30.(04.3275) Օպերատիվ- հետախուզական գործունեություն իրականացնող մարմիններից հարկային մարմինները իրավունք չունեն իրականացնել օպերատիվ հետախուզական միջոցառումներից

1. օպերատիվ ներդրում
2. արտաքին դիտում
3. կաշառք տալու կամ կաշառք տալու նմանակում

(3)

Չարդ 31.(04.3276) Քրեակատարողական ծառայողն իրավունք ունի գործադրել ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ և զենք, եթե

1. այլ միջոցները չեն ապահովում նրա վրա դրված պարտականությունների կատարումը
2. այդ վերաբերյալ առկա է վերահսկող դատախազի ցուցում
3. անմիջական ղեկավարի կողմից հրաման ստանալու դեպքում

(1)

Չարդ 32.(04.3277) Ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ և զենք գործադրելիս քրեակատարողական ծառայողը պարտավոր է

1. ստանալ համապատասխան գրավոր թույլտվություն վերահսկող դատախազից
2. նախազգուշացնել դրանք գործադրելու մտադրության մասին՝ անձին բավարար ժամանակ տրամադրելով իրպահանջների կատարման համար
3. նախ զեկուցել իր անմիջական ղեկավարին

(2)

Չարդ 33.(04.3278) Ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ և զենք գործադրման հետևանքով առաջացած մարմնական վնասվածքների, մահվան բոլոր դեպքերի մասին քրեակատարողական վարչության պետը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն անմիջապես տեղյակ է պահում

1. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության համապատասխան ծառայություն
2. ոստիկանության տարածքային բաժին
3. առողջապահության և դատախազության համապատասխան մարմիններին

(3)

Ֆարց 34.(04.3279) Քրեակատարողական ծառայողն իրավունք ունի գործադրել ֆիզիկական ուժ քրեակատարողական հիմնարկում գտնվող անձի կողմից քրեակատարողական ծառայողի օրինական պահանջները չկատարելու կամ պարտականությունների կատարմանը խոչընդոտելու

1. բացառիկ դեպքերում
2. յուրաքանչյուր դեպքում
3. համապատասխան թույլտվության դեպքում

(2)

ՍՀԻԱԲ

Գործառութային պարտականություններ

Ֆարց 1.(04.2192) Քրեակատարողական հիմնարկում սոցիալական, հոգեբանական եւ իրավական աշխատանքները պարտադիր են

1. անչափահասների հետ
 2. հաշմանդամ անձանց հետ
 3. պատժախուց տեղափոխված անձանց հետ
 4. իրենց մոտ մինչև 3 տարեկան երեխա ունեցող անձանց հետ
- (1)

Ֆարց 2.(04.2193) Դատապարտյալի վերաբերյալ բնութագիրը կազմվում է

1. միայն պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու դեպքում
 2. միայն պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժով փոխարինման ներկայացնելու դեպքում
 3. միայն տեխնիկատնտեսական աշխատանքներում ընդգրկվելու դեպքում
 4. ըստ նպատակայնության
- (4)

Ֆարց 3.(04.2194) Սոցիալական, հոգեբանական եւ իրավական աշխատանքներ դատապարտյալների հետ չեն իրականացվում Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված հետեւյալ պատժի կատարման ժամանակ՝

1. տուգանք
 2. ցմահ ազատազրկում
 3. ազատազրկում
- (1)

Ֆարց 4.(04.2195) Քրեակատարողական հիմնարկում պահվող կալանավորված անձանց և դատապարտյալների հետ տարվող սոցիալական, հոգեբանական եւ իրավական աշխատանքներում արգելվում է

1. կալանավորված անձանց եւ դատապարտյալի հարազատների հետ հոգեբանական աշխատանքների կատարումը
 2. կալանավորված անձի եւ դատապարտյալի հետ փոխհարաբերություններում մասնագիտական հմտությունների օգտագործումը
 3. կալանավորված անձանց եւ դատապարտյալների նկատմամբ հիպնոսի մեթոդների կիրառումը
 4. կալանավորված անձանց եւ դատապարտյալների հետ աշխատանքում վերջիններիս հուսադրելու նպատակով տեղեկատվություն տրամադրելը
- (3)

Ֆարց 5.(04.2199) Դատապարտյալների հետ իրականացվող սոցիալական, հոգեբանական եւ իրավական աշխատանքների փուլերն են

1. նախնական եւ ավարտական
 2. կարանտինային, ընթացիկ, ավարտական
 3. նախնական, ընթացիկ, ավարտական
 4. կարանտինային, ընթացիկ, նախապատրաստական
- (3)

Ֆարց 6.(04.2200) Դատապարտյալներն իրենց իրավունքների վերաբերյալ գրավոր իրազեկվում են

1. պայմանական վաղաժամկետ ազատման ներկայացումից հետո
2. պատժախուց տեղափոխվելուց հետո

3. խմբում տեղաբաշխումից հետո
 4. հիմնարկ ընդունումից հետո
- (4)

Ֆարց 7.(04.2201) Նախնական փուլում դատապարտյալների հետ իրականացվող սոցիալական, հոգեբանական եւ իրավական աշխատանքները ներառում են

1. դատապարտյալին իր իրավունքների եւ պարտականությունների, հիմնարկի ներքին կանոնակարգի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն տրամադրելը
 2. դատապարտյալի սոցիալական եւ հոգեբանական առանձնահատկություններն ուսումնասիրելը, ախտորոշելը և կարիքների գնահատումը
 3. դատապարտյալին սոցիալ-հոգեբանական համատեղելիության առումով նախնական գնահատական տալը
- (1)

Ֆարց 8.(04.3595) Կալանավորված անձանց հետ իրականացվող սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների փուլերն են

1. նախնական և ավարտական
 2. կարանտինային, ընթացիկ, ավարտական
 3. նախնական, ընթացիկ, ավարտական
 4. կարանտինային, ընթացիկ, նախապատրաստական
- (3)

Ֆարց 9.(04.2257) Ավարտական փուլում դատապարտյալների հետ իրականացվող սոցիալական, հոգեբանական եւ իրավական աշխատանքները ներառում են

1. կալանավորված անձանց արտաքին աշխարհի հետ կապը
 2. դատապարտյալին ազատման նախապատրաստելու ծրագիր կազմելը և ծրագրով նախատեսված կազմակերպչական բնույթի միջոցառումների կատարումն ապահովելը
 3. դատապարտյալի սոցիալական եւ հոգեբանական առանձնահատկություններն ուսումնասիրելը
 4. դատապարտյալին սոցիալ-հոգեբանական համատեղելիության առումով նախնական գնահատական տալը
- (2)

Ֆարց 10.(04.2258) Ընթացիկ փուլում դատապարտյալների հետ իրականացվող սոցիալական, հոգեբանական եւ իրավական աշխատանքները ներառում են

1. դատապարտյալին իր իրավունքների եւ պարտականությունների, հիմնարկի ներքին կանոնակարգի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն տրամադրելը
 2. դատապարտյալի սոցիալական եւ հոգեբանական առանձնահատկություններն ուսումնասիրելը, ախտորոշելը և կարիքների գնահատումը
 3. դատապարտյալին սոցիալ-հոգեբանական համատեղելիության առումով նախնական գնահատական տալը
 4. կալանավորված անձանց արտաքին աշխարհի հետ կապը
- (2)

Ֆարց 11.(04.2259) Ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների համար դատապարտված անձանց կողմից ներկայացված ներման նոր խնդրագրերը ՀՀ նախագահի քննարկմանը կարող են ներկայացվել նախորդ խնդրագրերի մերժման օրվանից

1. մեկ տարի անց
 2. երկու տարի անց
 3. վեց ամիս անց
- (1)

Ֆարց 12.(04.2260) Կալանավորված անձանց եւ դատապարտյալների հետ տարվող սոցիալական, հոգեբանական եւ իրավական աշխատանքների սկզբունքներն են

1. օրինականությունը, մարդասիրությունը, անձի իրավունքներն ու ազատությունները, արժանապատվությունը հարգելը, ինչպես նաեւ սոցիալական, հոգեբանական եւ իրավական աշխատանքների անհատականացումն ու տարբերակումը
 2. պատժի անհատականացումն ու տարբերակումը
 3. սոցիալական, հոգեբանական եւ իրավական աշխատանքների անհատականացումն ու տարբերակումը
 4. օրինականությունը, մարդասիրությունը, անձի իրավունքներն ու ազատությունները, արժանապատվությունը հարգելը
- (1)

Ֆարց 13.(04.2261) Ազատագրված անձի հետ ամուսնության գրանցումը կատարվում է

1. ամուսնացող անձանց ներկայությամբ, ուղղիչ հիմնարկի շենքում
2. ամուսնացող անձանց ներկայությամբ, քաղաքացիական կացության ակտերի գրանցման տարածքային մարմնում
3. ամուսնացող անձանցից որևէ մեկի ներկայությամբ, ուղղիչ հիմնարկի շենքում

(1)

Ֆարց 14.(04.2262) Դատապարտյալին, անձնական բացառիկ հանգամանքներով, կարճաժամկետ մեկնում կարող է տրամադրվել

1. մինչև 15 օր տևողությամբ՝ չհաշված մեկնելու և վերադարձի համար անհրաժեշտ ժամանակը /3 օր/
2. մինչև 7 օր տևողությամբ՝ չհաշված մեկնելու և վերադարձի համար անհրաժեշտ ժամանակը /3 օր/
3. մինչև մեկ ամիս տևողությամբ՝ չհաշված մեկնելու և վերադարձի համար անհրաժեշտ ժամանակը /3 օր/

(2)

Ֆարց 15.(04.2263) Քրեակատարողական հիմնարկի սոցիալական, հոգեբանական եւ իրավական աշխատանքների բաժնի մասնագետը պարտավոր է

1. կազմակերպում է հաշմանդամ անձանց համապատասխան կարգ նշանակելու աշխատանքները
2. հիմնարկի պետին եղրակացություն ներկայացնել կալանավորված անձի կամ դատապարտյալի հոգեբանական համատեղելիության վերաբերյալ
3. միջոցներ ձեռնարկել կալանավորված անձի կամ դատապարտյալի՝ օրենքով եւ այլ իրավական ակտերով նախատեսված իրավունքների ապահովման ուղղությամբ

(3)

Ֆարց 16.(04.2264) Դատապարտյալների երկարատեւ տեսակցությունների ժամանակացույցը հաստատում է

1. քրեակատարողական հիմնարկի խմբի ղեկավարը
2. քրեակատարողական վարչության պետը
3. քրեակատարողական հիմնարկիպետը

(3)

Ֆարց 17.(04.2567) Կալանավորված անձը կամ դատապարտյալը, որպես բացասական հակում ունեցող, հաշվառման վերցվում և հաշվառումից հանվում է

1. քրեակատարողական հիմնարկի պետի որոշմամբ
2. վերահսկող դատախազի որոշմամբ
3. քրեակատարողական վարչության պետի որոշմամբ

(1)

Ֆարց 18.(04.2568) Դատապարտյալի ուղղման գործընթացի ծրագիրը կազմվում է

1. անձնական գործի հիման վրա
2. ախտորոշման հիման վրա
3. գնահատումների հիման վրա
4. բնութագրի հիման վրա

(2)

Ֆարց 19.(04.2569) Դատապարտյալների խմբեր չեն ստեղծվում

1. բաց եւ կիսաբաց ուղղիչ հիմնարկներում
2. փակ ուղղիչ հիմնարկներում
3. կիսափակ եւ փակ ուղղիչ հիմնարկներում

(3)

Ֆարց 20.(04.2570) Կալանավորված անձին կամ դատապարտյալին որպես ինքնավնասման հակում ունեցող հաշվառելու հիմք է հանդիսանում

1. մինչև 1 տարվա ընթացքում երկու և ավելի ինքնավնասման փորձի կամ փաստի վերաբերյալ գրառումներն անձնական գործում
2. անվտանգության ապահովման բաժնի եզրակացությունը
3. մինչև 1 տարվա ընթացքում մեկ անգամ ինքնավնասման փորձի կամ փաստի վերաբերյալ գրառումն անձնական գործում

(1)

Ֆարց 21.(04.2571) Դատապարտյալին սոցիալական վերականգնման նպատակով կարճաժամկետ մեկնում տրամադրելու նպատակահարմարության հարցը չի կարող քննարկվել, եթե առկա չէ

1. դատապարտյալի ձգտումը կանգնել ուղղման ճանապարհին
2. տեղեկանք բնակության վայրից
3. դատապարտյալի անձնագիրը

(3)

Ֆարց 22.(04.2572) Դատապարտյալի սոցիալական վերականգնումը

1. դատապարտյալի հոգեկան առողջության վերականգնումն է
2. հիմնարկում իրականացվող միջոցառումներին եւ հանրագուտ աշխատանքներին մասնակցությունն է
3. արտաքին աշխարհի հետ շփումների եւ կապի պահպանման եւ բարելավման միջոցով դատապարտյալի անձնային, սոցիալ-հոգեբանական եւ հասարակական կարգավիճակի հաստատումը կամ վերահաստատումն է

(3)

Ֆարց 23.(04.2575) Դատապարտյալին կարճաժամկետ մեկնում տրամադրելու վերաբերյալ դրական որոշում կայացնելու դեպքում նույն օրը այդ նասին գրավոր տեղեկացվում է ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչություն՝ ներկայացնելով հետևյալ փաստաթղթերը

1. քրեակատարողական հիմնարկի պետի որոշման պատճենը և դատապարտյալի անձնագրի պատճենը
2. դատապարտյալի բնութագիրը և տեղեկանք անձնական գործից
3. դատապարտյալի բնութագիրը, անձնագրի պատճենը և տեղեկանք անձնական գործից
4. քրեակատարողական հիմնարկի պետի որոշման պատճենը

(4)

Ֆարց 24.(04.2576) Կալանավորված անձին, որպես փախուստի հակում ունեցող, հաշվառելու հիմք է հանդիսանում

1. նախկինում կատարած փախուստի փորձի կամ փախուստի փաստի վերաբերյալ գրառումներն անձնական գործում
2. բժշկական եզրակացությունը
3. հոգեբանական եզրակացությունը

(1)

Ֆարց 25.(04.2578) Քրեակատարողական հիմնարկի սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների բաժնի պետը պարտավոր է

1. հետևել անհրաժեշտ մասնագիտական բոլոր փաստաթղթերի լրացման ճշտությունը և ամբողջականությունը
2. կազմակերպել թերթերի, ամսագրերի և այլ պարբերականների ու գրականության ստացումը և դրանք կալանավորված անձանց ու դատապարտյալներին տրամադրումը
3. կազմել կալանավորվածի կամ դատապարտյալի հետ իրականացված սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների վերաբերյալ փաստաթղթեր

(1)

Ֆարց 26.(04.2579) Որոշակի ժամկետով ազատազրկման ձևով պատիժ կրող դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցը վարչական հանձնաժողովի կողմից հետաձգվելու դեպքում կրկին կարող է դրվել քննարկման հետաձգման որոշման ընդունումից

1. ոչ շուտ, քան երկու ամիս անց
2. ոչ ուշ, քան երկու ամիս անց
3. ոչ ուշ, քան երեք ամիս անց

(1)

Ֆարց 27.(04.2580) Դատապարտյալին որպես փախուստի հակում ունեցող հաշվառելու հիմք են հանդիսանում

1. քրեական գործով վարույթն իրականացնող մարմնի ցուցումը
2. երկու եւ ավելի դատվածությունների առկայությունը
3. նախկինում կատարած փախուստի փորձի կամ փախուստի փաստի վերաբերյալ գրառումները անձնական գործում

(3)

Ֆարց 28.(04.2581) Որոշակի ժամկետով կամ ցմահ ազատազրկման դատապարտված անձին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ

պատժատեսակով փոխարինելու ներկայացման հարցերը պատիժը կատարող հիմնարկի կողմից քննարկելու կարգը սահմանում է

1. ՀՀ կառավարությունը
 2. ՀՀ արդարադատության նախարարությունը
 3. ՀՀ դատարանները
- (1)

Ֆաթց 29.(04.2582) Դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ներկայացման վարչական հանձնաժողովի նիստը վարում է

1. հանձնաժողովի նախագահը
 2. նիստի քարտուղարը
 3. հիմնարկի պետի տեղակալը
- (1)

Ֆաթց 30.(04.2584) Դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ներկայացման հանձնաժողովը հրավիրում է նիստ

1. յուրաքանչյուր ամիս առնվազն երկու անգամ
 2. յուրաքանչյուր ամիս մեկ անգամ
 3. յուրաքանչյուր ամիս առնվազն երեք անգամ
 4. կախված ներկայացվող դատապարտյալների թվի տոկոսային հարաբերությունից
- (2)

Ֆաթց 31.(04.2585) Դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ներկայացման փաստաթղթերը հանձնաժողովին ներկայացնում է

1. տվյալ դատապարտյալի խմբի ղեկավարը
 2. սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների բաժնի պետը
 3. հանձնաժողովի նախագահի տեղակալը
 4. հանձնաժողովի քարտուղարը
- (3)

Ֆաթց 32.(04.2586) Դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ներկայացման նպատակահարմարության վերաբերյալ որոշումներն ընդունվում են

1. փակ քվեարկությամբ, նիստին ներկա գտնվող հանձնաժողովի անդամների ձայների մեծամասնությամբ
 2. փակ քվեարկությամբ, նիստին ներկա գտնվող հանձնաժողովի անդամների ձայների երկու երրորդի առկայության դեպքում
 3. բաց քվեարկությամբ, նիստին ներկա գտնվող հանձնաժողովի անդամների ձայների մեծամասնությամբ
 4. բաց քվեարկությամբ եւ հիմնարկի պետի որոշմամբ
- (3)

Ֆաթց 33.(04.2587) Որոշակի ժամկետով ազատազրկման ձեռով պատիժ կրող դատապարտյալին պատժից պայմանական վաղաժամկետ ազատման կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինման ներկայացման հարցը հանձնաժողովի քննարկմանը կրկին կարող է դրվել հանձնաժողովի կողմից «Ենթակա չէ ներկայացման» որոշում ընդունելուց ոչ շուտ, քան

1. մեկ ամիս անց
 2. երկու ամիս անց
 3. երեք ամիս անց
 4. վեց ամիս անց
- (3)

Ֆաթց 34.(04.2588) Ցմահ ազատազրկման դատապարտված անձի պայմանական վաղաժամկետ ազատման ներկայացման հարցը հանձնաժողովի քննարկմանը կրկին կարող է դրվել հանձնաժողովի կողմից «Ենթակա չէ ներկայացման» որոշում ընդունելուց ոչ շուտ, քան

1. մեկ տարի անց
 2. մեկ տարի վեց ամիս անց
 3. երկու տարի անց
 4. վեց ամիս անց
- (2)

Ֆաթեց 35.(04.2590) Դատապարտյալի հետ սոցիալական, հոգեբանական եւ իրավական աշխատանքներ իրականացվում են ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված հետեւյալ պատիժների կատարման ժամանակ

1. տուգանք, կալանք եւ հանրային աշխատանքներ
 2. հանրային աշխատանքներ
 3. հանրային աշխատանքներ եւ կալանք
 4. կալանք, որոշակի ժամկետով ազատազրկում, ցմահ ազատազրկում
- (4)

Ֆաթեց 36.(04.2591) Քրեակատարողական հիմնարկում սոցիալական, հոգեբանական եւ իրավական աշխատանքների խնդիրներն են

1. կալանավորվածների եւ դատապարտյալների հարազատների հետ հոգեբանական աշխատանքների կատարումը
 2. կալանավորվածի եւ դատապարտյալի հետ փոխհարաբերություններում մասնագիտական հմտությունների օգտագործումը
 3. դատապարտյալներին հասարակության վերինտեգրվելուն նպաստելը
 4. կալանավորվածներին եւ դատապարտյալներին վերադաստիակելը
- (3)

Ֆաթեց 37.(04.2593) Ցմահ ազատազրկման ձևով պատիժ կրող դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցը վարչական հանձնաժողովի կողմից հետաձգվելու դեպքում կրկին կարող է դրվել քննարկման հետաձգման որոշման ընդունումից

1. ոչ ուշ, քան 1 տարի անց
 2. ոչ շուտ, քան 1 տարի անց
 3. ոչ ուշ, քան 6 ամիս անց
- (2)

Ֆաթեց 38.(04.2594) Դատապարտյալների ներման խնդրագրերը պատիժը կրելու վայրի վարչակազմի միջոցով ուղարկվում են Հայաստանի Հանրապետության Նախագահի քննարկման

1. երկշաբաթյա ժամկետում
 2. երեք շաբաթվա ժամկետում
 3. ընտանեկան խնդիրների ստեղծումը
- (1)

Ֆաթեց 39.(04.2595) Կալանավորված անձանց և դատապարտյալների հետ սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներ իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության կարգը սահմանվում է

1. ՀՀ արդարադատության նախարարի 2008 թվականի մայիսի 30-ի 44-Ն հրամանով
 2. ՀՀ կառավարության որոշմամբ
 3. ՀՀ արդարադատության նախարարի 2016 թվականի հուլիսի 13-ի 279-Ն հրամանով
- (3)

Ֆաթեց 40.(04.2597) Դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ներկայացման հանձնաժողովը կայացրած որոշումը կարող է բողոքարկվել

1. ՀՀ արդարադատության նախարարին
 2. ՀՀ Վճռաբեկ դատարանին
 3. դատական կարգով
 4. վերադասության կարգով
- (4)

Ֆաթեց 41.(04.3294) Դատապարտյալին կարճաժամկետ մեկնում տրամադրելիս սոցիալական վերականգնման բաղադրատարր է

1. քաղաքացիաիրավական գործարքներին մասնակցությունը
 2. ինքնավճարման, փախուստի հակումներից ազատվելը
 3. ընտանեկան խնդիրների ստեղծումը
- (1)

ՊԱԲ

Գործառույթային պարտականություններ

Չարդ 1.(04.3226) Քրեակատարողական հիմնարկի արգելագոտու քողարկող պարսպի բարձրությունը

1. առնվազն 5 մետր է
2. առնվազն 4 մետր է
3. առնվազն 6 մետր է

(3)

Չարդ 2.(04.3227) Քրեակատարողական հիմնարկի պահակետը հանձնած ծառայողը՝ դիտաշտարակից իջնելով կանգնում է

1. շարքի առջևում
2. շարքի վերջում
3. շարքի կողքից

(2)

Չարդ 3.(04.3228) Քրեակատարողական հիմնարկի տարածքում գտնվող աշխատողների վրա հարձակման, կալանավորված անձանց և դատապարտյալների փախուստի փորձի, արգելափակոցի հաղթահարման դեպքում պահակետի ծառայողը հայտարարում է

1. առաջին աստիճանի տազմապ
2. երկրորդ աստիճանի տազմապ
3. երրորդ աստիճանի տազմապ

(3)

Չարդ 4.(04.3229) Քրեակատարողական հիմնարկի աշխատողների անձնական տրանսպորտային միջոցների մուտքը կալանավորված անձանց և դատապարտյալների բնակության տեղամաս

1. չի թույլատրվում
2. թույլատրվում է հատուկ հսկողությամբ՝ հիմնարկի պետի ցուցումով
3. թույլատրվում է միայն բացառիկ դեպքերում՝ հիմնարկի պետի ցուցումով

(3)

Չարդ 5.(04.3230) Ռետինե մահակ գործադրելու դեպքում արգելվում է հարվածել

1. անձի գլխին և սեռական օրգաններիին
2. անձի գլխին, պարանոցին, անրակոսկրային շրջաններիին, որովայնին, սեռական օրգաններիին, իսկ կանանց՝ նաև կրծքավանդակին
3. անձի գլխին, որովայնին, իսկ կանանց՝ նաև կրծքավանդակին

(2)

Չարդ 6.(04.3231) Քրեակատարողական հիմնարկում պատահական կրակոցի դեպքում, որը մահվան կամ այլ ծանր հետևանքների պատճառ չի դարձել

1. քրեակատարողական հիմնարկի պետի կողմից նշանակվում է ծառայողական քննություն և գրավոր զեկուցվում վարչության պետին
2. քրեակատարողական վարչության պետի կողմից նշանակվում է ծառայողական քննություն և գրավոր զեկուցվում արդարադատության նախարարին
3. արդարադատության նախարարի կողմից նշանակվում է ծառայողական քննություն և գրավոր զեկուցվում հանրապետության դատախազին

(1)

Չարդ 7.(04.3232) Քրեակատարողական հիմնարկի արգելագոտու պարագծով տեղադրվում են նախագգուշացնող ցուցանակներ՝ «Արգելագոտի, մուտքն արգելված է» բովանդակությամբ

1. առնվազն յուրաքանչյուր 70 մետրը մեկ
2. առնվազն յուրաքանչյուր 100 մետրը մեկ
3. առնվազն յուրաքանչյուր 25 մետրը մեկ
4. առնվազն յուրաքանչյուր 50 մետրը մեկ

(4)

Չարդ 8.(04.3233) Քրեակատարողական հիմնարկի արգելագոտու հիմնական պատի բարձրությունը

1. առնվազն 3 մետր է
2. առնվազն 5 մետր է
3. առնվազն 6 մետր է

(2)

Չարդ 9.(04.3234) Քրեակատարողական հիմնարկի հսկիչ անցագրային կետի անցուղային միջանցքով այցելուի մուտքի ժամանակ չի թույլատրվում միջանցքում միաժամանակ գտնվեն

1. երեքից ավելի չափահաս անձինք
2. երեքից ավելի չափահաս և անչափահաս անձինք
3. երեքից ավելի անձինք

(1)

Չարդ 10.(04.3235) Հրդեհաշիջման կամ այլ փրկարար խմբերի և տրանսպորտային միջոցների մուտքը քրեակատարողական հիմնարկի կալանավորված անձանց և դատապարտյալների բնակության տեղամաս թույլատրվում է

1. առանց փաստաթղթի՝ գրանցելով խմբում առկա անձանց թվաքանակը
2. «Գ» ձևի անցագրով
3. առանց փաստաթղթերի ստուգման և գրանցման
4. փաստաթղթերի ստուգմամբ և համապատասխան մատյաններում գրանցմամբ

(1)

Չարդ 11.(04.3236) Քրեակատարողական հիմնարկում պահակետը համարվում է ընդունած-հանձնած

1. երբ պահակետը հանձնող ծառայողը զեկուցում է՝ «Պահակետը հանձնեց»
2. երբ պահակետը հանձնող ծառայողը զեկուցում է՝ «Պահակետը հանձնեց», իսկ պահակետը ընդունող ծառայողը՝ «Պահակետը ընդունեց»
3. երբ պահախմբի պետը հրամայում է ընդունել պահակետը

(2)

Ֆայրց 12.(04.3237) Քաղաքացիական առողջապահական հաստատությունում նշանակված քրեակատարողական ծառայության պահակետում ծառայության են նշանակվում առնվազն

1. կրտսեր խմբի երեք ծառայող՝ մեկ կալանավորված անձի կամ դատապարտյալի հաշվարկով
2. կրտսեր խմբի երկու ծառայող՝ մեկ կալանավորված անձի կամ դատապարտյալի հաշվարկով
3. կրտսեր խմբի մեկ ծառայող՝ մեկ կալանավորված անձի կամ դատապարտյալի հաշվարկով

(2)

Ֆայրց 13.(04.3238) Մեկ կալանավորված անձի կամ դատապարտյալի ուղեցորդումն իրականացվում է

1. նվազագույնը երկու ծառայողի կողմից
2. նվազագույնը մեկ ծառայողի կողմից
3. նվազագույնը չորս ծառայողի կողմից

(1)

Ֆայրց 14.(04.3239) Փակ տեսակի ուղղիչ հիմնարկում պատիժ կրող մեկ դատապարտյալի ուղեկցումն իրականացվում է

1. առնվազն 5 ծառայողի կողմից
2. առնվազն 3 ծառայողի կողմից
3. առնվազն 4 ծառայողի կողմից

(2)

Ֆայրց 15.(04.3240) Կալանավորված անձանց կամ դատապարտյալներին հատուկ ավտոմոբիլով փոխադրման դեպքում պահախումբը պետք է ներառի

1. կրտսեր խմբի երեք ծառայող
2. միջին խմբի չորս ծառայող
3. 5 ծառայող, ընդ որում՝ 2-ը կրտսեր խմբի
4. պահախմբի պետ, պահախմբի պետի օգնական, վարորդ և ծառայող

(4)

Ֆայրց 16.(04.3241) Քրեակատարողական հիմնարկում գտնվելու ողջ ժամանակահատվածի ընթացքում այցելուին՝ կրելու նպատակով հանձնվում է անցաթուղթ, որի վրա գրված է՝

1. «Այցելու»
2. «Անուն, Ազգանուն»
3. «Քաղաքացի»

(1)

Ֆայրց 17.(04.3242) Քրեակատարողական հիմնարկում կալանավորված անձանց և

դատապարտյալների բնակության տեղամաս այցելուների մուտքը, որպես կանոն իրականացվում է՝

1. աշխատանքային օրերին, ժամը 10-17-ը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի
2. աշխատանքային օրերին ժամը 9-18-ը
3. ցանկացած օր, ժամը 10-17-ը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի

(1)

Չարդ 18.(04.3243) Քրեակատարողական հիմնարկի հետքային հսկիչ արահետի լայնությունը պետք է լինի

1. առնվազն 5 մետր
2. առնվազն 2 մետր
3. առնվազն 7 մետր

(1)

Չարդ 19.(04.3244) Քրեակատարողական հիմնարկի պահախմբի պետին արգելվում է

1. ինքնուրույն նշանակել լրացուցիչ պահակետեր
2. ինքնուրույն փոխարինել պահակետում նշանակված ծառայողին
3. ինքնուրույն պակասեցնել հիմնարկի՝ օրվա անվտանգության ապահովման կազմակերպման հրամանով նախատեսված պահակետերի քանակը կամ փոխել դրանց տեղակայման վայրը

(3)

Չարդ 20.(04.3245) Քրեակատարողական հիմնարկի պահպանության ապահովման բաժնի կրտսեր խմբի ծառայողներն ապահովվում են

1. մարտական զենքով
2. ծառայողական և քաղաքացիական զենքով
3. քաղաքացիական և մարտական զենքով

(1)

Չարդ 21.(04.3246) Արգելվում է կատարել պատանդի վիճակում գտնվող վերադաս ծառայողի հրամանը

1. ցանկացած պարագայում
2. եթե այն կարող է խոչընդոտ"լ ծառայողի համար օրենսդրությամբ սահմանված պարտականությունների կատարումը
3. երբ այն չի կարող խոչընդոտ"լ ծառայողի համար օրենսդրությամբ սահմանված պարտականությունների կատարումը

(2)

